**ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N2.39**
**Ծածկագիրը՝ «ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-10/26»**

ք.Երևան «26» մարտի 2026թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Վ. Չիլինգարյանի, որը գործում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Պատրոն ՌՄ» ՍՊԸ, ի դեմս ընկերության տնօրեն Ս. Թորոսյանի, որը գործում է «Պատրոն ՌՄ» ՍՊԸ կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1 023 018 (մեկ միլիոն քսաներեք հազար տասնութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ոչ

պակաս քան 365 օրացուցային օրը: Ապրանքի երաշխիքային ժամկետի հաշվարկը սկսվում է ապրանքի ընդունման պահից անմիջապես հետո:

Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անքաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական

հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | «Պատրոն ՌՄ» ՍՊԸ |
| ՀՀ, ք.Երևան-0042, Ի.Գասպարյան 33 | ՀՀ, ք.Երևան, Վարդանանց 18/2 |
| Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ | «Էվոկաբանկ » ՓԲԸ |
| ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ | Հ/Հ 1660000446270100 |
| ՀՎՀՀ 01216144 | ՀՎՀՀ 00861057 |
| **Գլխավոր տնօրեն** | **Տնօրեն** |
| ______________ Վ.Չիլինգարյան | ______________ Ս.Թորոսյան |
| **(ստորագրություն) Կ.S.** | **(ստորագրություն) Կ.S.** |

Հավելված N 1
«26» մարտի 2026 թ. կնքված
N 2.39 պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 4 | 30121460/28 | Տոներային քարտրիջներ | PATRON /G&G / PRINTERMAYIN / SAKURA / AMERICAN Ninestar Corporation / PrinterMayin LTD / Sakura printing Co LTD /Shanghai Diamond Ltd CE505A | **Տոներային քարտրիջ՝ HP CE505A լազերային տպիչի համար ՝** - գույնը՝ սև. - համատեղելի տպիչներ՝ HP LaserJet P2055, HP LaserJet P2055dn, HP LaserJet P2035 - ռեսուրսը՝ 2700 էջ: | հատ | 1920 | 9600 | 5 | ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ պահեստ | 5 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |
| 5 | 30121460/29 | Տոներային քարտրիջներ | PATRON /G&G / PRINTERMAYIN / SAKURA / AMERICAN Ninestar Corporation / PrinterMayin LTD / Sakura printing Co LTD /Shanghai Diamond Ltd Q2612A/ FX-10/703 | **Տոներային քարտրիջ՝ Q2612A/ FX-10/703 լազերային տպիչի համար ՝** - գույնը՝ սև. - համատեղելի տպիչներ՝ Canon i-SENSYS LBP2900B, Canon i-SENSYS LBP3000, Canon i-SENSYS LBP2900 - ռեսուրսը՝ 2000 էջ: | հատ | 1596 | 12768 | 8 | ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ պահեստ | 8 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |
| 6 | 30121460/30 | Տոներային քարտրիջներ | PATRON /G&G / PRINTERMAYIN / SAKURA / AMERICAN Ninestar Corporation / PrinterMayin LTD / | **Տոներային քարտրիջ՝ CF283X/737 լազերային տպիչի համար ՝** - գույնը՝ սև. - համատեղելի տպիչներ՝ | հատ | 1710 | 8550 | 5 | ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ | 5 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Sakura printing Co LTD /Shanghai Diamond Ltd CF283X/737 | Canon i-SENSYS MF212w, Canon i-SENSYS MF226dn, Canon i-SENSYS MF216n, Canon i-SENSYS MF211, Canon i-SENSYS MF229dw, Canon i-SENSYS MF217w<br>- ռեսուրսը՝ 2400 էջ: | | | | | պահեստ | | |
| 7 | 30121460/31 | Տոներային քարտրիջներ | HP,<br>HP Inc.<br>HP CF530A (№205A) | **Տոներային քարտրիջ՝ CF510A/CF530A լազերային տպիչի համար՝**<br>- գույնը՝ սև.<br>- համատեղելի տպիչներ՝ HP Color LaserJet Pro M180n, HP Color LaserJet Pro M181fw<br>- ռեսուրսը՝ 1100 էջ:<br>QR կոդի առկայություն՝ բնօրինակությունը ստուգելու համար | հատ | 30000 | 60000 | 2 | ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ պահեստ | 2 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |
| 8 | 30121460/32 | Տոներային քարտրիջներ | HP,<br>HP Inc.<br>HP CF531A (№205A) | **Տոներային քարտրիջ՝ CF511A/CF531A լազերային տպիչի համար՝**<br>- գույնը՝ կապույտ.<br>- համատեղելի տպիչներ՝ HP Color LaserJet Pro M180n, HP Color LaserJet Pro M181fw<br>- ռեսուրսը՝ 900 էջ:<br>QR կոդի առկայություն՝ բնօրինակությունը ստուգելու համար | հատ | 33000 | 66000 | 2 | ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ պահեստ | 2 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |
| 9 | 30121460/33 | Տոներային քարտրիջներ | HP,<br>HP Inc.<br>HP CF532A (№205A) | **Տոներային քարտրիջ՝ CF512A/CF532A լազերային տպիչի համար՝**<br>- գույնը՝ դեղին.<br>- համատեղելի տպիչներ՝ HP Color LaserJet Pro M180n, HP Color LaserJet Pro M181fw<br>- ռեսուրսը՝ 900 էջ: | հատ | 33000 | 66000 | 2 | ք. Երևան Գասպարյա10ն 33, «Հա11յաէրոնավիգացիա» ՓԲԸ պահեստ | 2 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | QR կոդի առկայություն՝ բնօրինակությունը ստուգելու համար | | | | | | | |
| 10 | 30121460/34 | Տոներային քարտրիջներ | HP,<br>HP Inc.<br>HP CF533A (№205A) | **Տոներային քարտրիջ՝ CF513A/CF533A լազերային տպիչի համար** ՝<br>- գույնը՝ մագենտա.<br>- համատեղելի տպիչներ՝ HP Color LaserJet Pro M180n, HP Color LaserJet Pro M181fw<br>- ռեսուրսը՝ 900 էջ:<br>QR կոդի առկայություն՝ բնօրինակությունը ստուգելու համար | հատ | 33000 | 66000 | 2 | ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ պահեստ | 2 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |
| 12 | 30121460/36 | Տոներային քարտրիջներ | HP,<br>HP Inc.<br>HP CF350A (№130A) | **Տոներային քարտրիջ՝ HP 130A (CF350A) լազերային տպիչի համար** ՝<br>- գույնը՝ սև.<br>- համատեղելի տպիչներ՝ HP Color LaserJet Pro M176n, HP Color LaserJet Pro M177fw<br>- ռեսուրսը՝ 1300 էջ:<br>QR կոդի առկայություն՝ բնօրինակությունը ստուգելու համար | հատ | 34200 | 34200 | 1 | ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ պահեստ | 1 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |
| 13 | 30121460/37 | Տոներային քարտրիջներ | HP,<br>HP Inc.<br>HP CF351A (№130A) | **Տոներային քարտրիջ՝ HP 130A (CF351A) լազերային տպիչի համար** ՝<br>- գույնը՝ կապույտ.<br>- համատեղելի տպիչներ՝ HP Color LaserJet Pro M176n, HP Color LaserJet Pro M177fw<br>- ռեսուրսը՝ 1000 էջ:<br>QR կոդի առկայություն՝ բնօրինակությունը ստուգելու համար | հատ | 33000 | 33000 | 1 | ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ պահեստ | 1 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |
| 14 | 30121460/38 | Տոներային | HP, | **Տոներային քարտրիջ՝ HP** | հատ | 33000 | 33000 | 1 | ք. Երևան | 1 | մինչև 2026թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | քարտրիջներ | HP Inc.<br>HP CF352A (№130A) | **130A (CF352A) լազերային տպիչի համար `**<br>- գույնը՝ դեղին.<br>- համատեղելի տպիչներ՝ HP Color LaserJet Pro M176n, HP Color LaserJet Pro M177fw<br>- ռեսուրսը՝ 1000 էջ:<br>QR կոդի առկայություն՝ բնօրինակությունը ստուգելու համար | | | | | Գասպարյան 33, «Հայաէրոն15ա վիզացիա» ՓԲԸ պահեստ | | օգոստոսի 1-ը |
| 15 | 30121460/39 | Տոներային քարտրիջներ | HP,<br>HP Inc.<br>HP CF353A (№130A) | **Տոներային քարտրիջ ՝ HP 130A (CF353A) լազերային տպիչի համար՝**<br>- գույնը՝ մագենտա.<br>- համատեղելի տպիչներ՝ HP Color LaserJet Pro M176n, HP Color LaserJet Pro M177fw<br>- ռեսուրսը՝ 1000 էջ: | հատ | 33000 | 33000 | 1 | ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավի գացիա» ՓԲԸ պահեստ | 1 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |
| 17 | 30121460/41 | Տոներային քարտրիջներ | HP,<br>HP Inc.<br>HP CE310A (№126A) | **Տոներային քարտրիջ՝ HP CE310A լազերային տպիչի համար `**<br>- գույնը՝ սև.<br>- համատեղելի տպիչներ HP LaserJet Pro CP1025, HP LaserJet Pro CP1025nw, HP LaserJet Pro 100 M175a, HP LaserJet Pro 100 M175nw, HP TopShot LaserJet Pro M275<br>- ռեսուրսը՝ 2000 էջ:<br>QR կոդի առկայություն՝ բնօրինակությունը ստուգելու համար | հատ | 34200 | 10260<br>0 | 3 | ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավի գացիա» ՓԲԸ պահեստ | 3 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |
| 18 | 30121460/42 | Տոներային քարտրիջներ | HP,<br>HP Inc.<br>HP CE311A (№126A) | **Տոներային քարտրիջ՝ HP CE311A լազերային տպիչի համար `**<br>**- գույնը՝ կապույտ.**<br>- համատեղելի տպիչներ՝ HP | հատ | 39000 | 11700<br>0 | 3 | ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավի գացիա» ՓԲԸ | 3 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | LaserJet Pro CP1025, HP LaserJet Pro CP1025nw, HP LaserJet Pro 100 M175a, HP LaserJet Pro 100 M175nw, HP TopShot LaserJet Pro M275<br>- ռեսուրսը՝ 1000 էջ: | | | | | պահեստ | | |
| 19 | 30121460/43 | Տոներային քարտրիջներ | HP,<br>HP Inc.<br>HP CE312A (№126A) | **Տոներային քարտրիջ՝ HP CE312A լազերային տպիչի համար `**<br>- գույնը՝ դեղին.<br>- համատեղելի տպիչներ HP LaserJet Pro CP1025, HP LaserJet Pro CP1025nw, HP LaserJet Pro 100 M175a, HP LaserJet Pro 100 M175nw, HP TopShot LaserJet Pro M275<br>- ռեսուրսը՝ 1000 էջ:<br>QR կոդի առկայություն՝ բնօրինակությունը ստուգելու համար | հատ | 39000 | 11700<br>0 | 3 | ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ պահեստ | 3 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |
| 20 | 30121460/44 | Տոներային քարտրիջներ | HP,<br>HP Inc.<br>HP CE313A (№126A) | **Տոներային քարտրիջ՝ HP CE313A լազերային տպիչի համար `**<br>- գույնը՝ մագենտա.<br>- համատեղելի տպիչներ՝ HP LaserJet Pro CP1025, HP LaserJet Pro CP1025nw, HP LaserJet Pro 100 M175a, HP LaserJet Pro 100 M175nw, HP TopShot LaserJet Pro M275<br>- ռեսուրսը՝ 1000 էջ:<br>QR կոդի առկայություն՝ բնօրինակությունը ստուգելու համար | հատ | 39000 | 11700<br>0 | 3 | ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ պահեստ | 3 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |
| 23 | 30121460/47 | Տոներային քարտրիջներ | PATRON /G&G /<br>PRINTERMAYIN /<br>SAKURA / AMERICAN | **Քարտրիջներ՝ HP CB 436A լազերային տպիչի համար `** | հատ | 1620 | 16200 | 10 | ք. Երևան Գասպարյան 33, | 10 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |

*Հավելված N 2*
*« 26 » մարտի 2026 թ. կնքված*
*N 2.39 պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | |
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 4 | 30121460/28 | Տոներային քարտրիջներ | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | 9600 | **9600** |
| 5 | 30121460/29 | Տոներային քարտրիջներ | 12768 | 12768 | 12768 | 12768 | 12768 | 12768 | 12768 | 12768 | 12768 | **12768** |
| 6 | 30121460/30 | Տոներային քարտրիջներ | 8550 | 8550 | 8550 | 8550 | 8550 | 8550 | 8550 | 8550 | 8550 | **8550** |
| 7 | 30121460/31 | Տոներային քարտրիջներ | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | 60000 | **60000** |
| 8 | 30121460/32 | Տոներային քարտրիջներ | 66000 | 66000 | 66000 | 66000 | 66000 | 66000 | 66000 | 66000 | 66000 | **66000** |
| 9 | 30121460/33 | Տոներային քարտրիջներ | 66000 | 66000 | 66000 | 66000 | 66000 | 66000 | 66000 | 66000 | 66000 | **66000** |
| 10 | 30121460/34 | Տոներային քարտրիջներ | 66000 | 66000 | 66000 | 66000 | 66000 | 66000 | 66000 | 66000 | 66000 | **66000** |
| 12 | 30121460/36 | Տոներային քարտրիջներ | 34200 | 34200 | 34200 | 34200 | 34200 | 34200 | 34200 | 34200 | 34200 | **34200** |
| 13 | 30121460/37 | Տոներային քարտրիջներ | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | **33000** |
| 14 | 30121460/38 | Տոներային քարտրիջներ | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | **33000** |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ninestar Corporation / PrinterMayin LTD / Sakura printing Co LTD /Shanghai Diamond Ltd CB435A/CB436A/ CE285A/725/728 | - գույնը՝ սև. <br> - համատեղելի տպիչներ՝ HP LaserJet M1120 mfp, M1522 mfp, P1505 <br> - ռեսուրսը՝ 2000էջ: | | | | | «Հայաէրոնավի գացիա» ՓԲԸ պահեստ | | |
| 25 | 30121460/49 | Տոներային քարտրիջներ | HP, <br> HP Inc. <br> HP W1500A (№150A) | **HP Laserjet M141w տպիչի քարտրիջ (մոդել W1500A)** QR կոդի առկայություն՝ բնօրինակությունը ստուգելու համար | հատ | 26220 | 131100 | 5 | ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավի գացիա» ՓԲԸ պահեստ | 5 | մինչև 2026թ. օգոստոսի 1-ը |

1 **Պարտադիր պայման է հանդիսանում մատակարարվող ապրանքների չօգտագործված լինելը:**

**ԳՆՈՐԴ**
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան-0042, Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
**Գլխավոր տնօրեն**

_______________ **Վ.Չիլինգարյան**
**(ստորագրություն)** Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Վարդանանց 18/2
«Էվոկաբանկ » ՓԲԸ
Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057
**Տնօրեն**

_______________ **Ս.Թորոսյան**
**(ստորագրություն)** Կ.Տ.

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | 30121460/39 | Տոներային քարտրիջներ | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | 33000 | **33000** |
| 17 | 30121460/41 | Տոներային քարտրիջներ | 102600 | 102600 | 102600 | 102600 | 102600 | 102600 | 102600 | 102600 | 102600 | **102600** |
| 18 | 30121460/42 | Տոներային քարտրիջներ | 117000 | 117000 | 117000 | 117000 | 117000 | 117000 | 117000 | 117000 | 117000 | **117000** |
| 19 | 30121460/43 | Տոներային քարտրիջներ | 117000 | 117000 | 117000 | 117000 | 117000 | 117000 | 117000 | 117000 | 117000 | **117000** |
| 20 | 30121460/44 | Տոներային քարտրիջներ | 117000 | 117000 | 117000 | 117000 | 117000 | 117000 | 117000 | 117000 | 117000 | **117000** |
| 23 | 30121460/47 | Տոներային քարտրիջներ | 16200 | 16200 | 16200 | 16200 | 16200 | 16200 | 16200 | 16200 | 16200 | **16200** |
| 25 | 30121460/49 | Տոներային քարտրիջներ | 131100 | 131100 | 131100 | 131100 | 131100 | 131100 | 131100 | 131100 | 131100 | **131100** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան-0042, Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/6
ՀՎՀՀ 01216144
**Գլխավոր տնօրեն**

______________ **Վ.Չիլինգարյան**
**(ստորագրություն)** **Կ.Տ.**

**ՎԱՃԱՌՈՂ**
«Պատրոն ՌՄ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Վարդանանց 18/2
«Էվոկաբանկ » ՓԲԸ
Հ/Հ 1660000446270100
ՀՎՀՀ 00861057
**Տնօրեն**

______________ **Ս.Թորոսյան**
**(ստորագրություն)** **Կ.Տ.**

*Հավելված N 3*
*«     » մարտի  2026 թ. կնքված*
*N              պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| հվհհ ____________________ | հվհհ____________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«   » «          » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝  __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    »   «              »  20    թ. դուրս գրված N ___  հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը  մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված N3. 1*
*«        » մարտի   2026 թ. կնքված*
*N              պայմանագրի*

ԱԿՏ   N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________________
Գնորդի անվանումը                                                                                     Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20    թ. ______________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը                                                              պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20  թ. _________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«        » մարտի 2026 թ. կնքված*
*N                     պայմանագրի*

## ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ________________________-ի և ____________________-ի միջև «—»      20  թ. կնքված
գնորդի անվանումը                          վաճառողի անվանումը

«--------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

__________________-ի  միջև «--»  20  թ-ին կնքվել է «-------------------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

________________________________________________ ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»     20  թ.